



COVID-19-ի պատվաստման մասին փաստեր. Հղիություն և կրծքով կերակրում



ԻՆՉՈՒՒ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ COVID-19-Ի ԴԵՄ

- **Պատվաստումը ԼԱՎԱԳՈՒՅՆԼիցոցն է պաշտպանելու ձեր նորածին COVID-19-ի հետևանքով առաջացող լուրջ առողջական խնդիրներից:** Երբ դուք պատվաստված եք, դուք փոխանցում եք ձեր պաշտպանիչ հակամարմինները ձեր արգանդում գտնվող պտղին: Ձեր երեխան ծնվում է COVID-19-ից որոշակի պաշտպանվածությամբ:
- **Պատվաստումը նվազեցնում է հղիության ընթացքում COVID-19-ով ծանր հիվանդանալու վտանգը:** COVID-19-ով հիվանդ հղի մարդիկ ավելի հավանական է, որ ծանր կհիվանդանան և կհոսպիտալացվեն կամ վաղաժամ կծննդաբերեն:



Պատվաստումները հղիության և կրծքով կերակրելու ընթացքում խրախուսվում են բոլոր խոշոր մայրական առողջապահական կազմակերպությունների կողմից:

ԵՐԲ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

- Դուք կարող եք ստանալ պատվաստումը, ներառյալ խթանիչ պատվաստումը, հղիության ցանկացած փուլում կամ երբ կերակրում եք կրծքով:
- **Կարևոր է ստանալ թարմացված (երկվալենտ) խթանիչ,** եթե անցել է առնվազն 2 ամիս ձեր վերջին հիմնական պատվաստումից կամ խթանիչ դեղաչափից:
- Դուք կարող եք միևնույն ժամանակ ստանալ այլ պատվաստումներ ևս, ներառյալ գրիպի և tdap (ԱՓԴԿ՝ փայտացում, դիֆթերիա և կապույտ հազ) պատվաստումները:
- Մասրամասների համար այցելե՛ք՝ ph.lacounty.gov/covidvaccineschedules կայքը:



ԻՆՉՈՒՒ ԵՆ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐՆ ԱՊԱՅՈՎ ՀՂԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ

- Հղիության ընթացքում պատվաստված շատ մարդկանց ուսումնասիրությունները և անվտանգության հսկողությունը (մոնիտորինգը) ցույց են տվել, որ հղիության ընթացքում բարդությունների կամ երեխայի մոտ բնածին արատների վտանգը չի մեծացել:
- COVID-19 պատվաստանյութերից և ոչ մեկը չի պարունակում կենդանի վիրուս: Պատվաստանյութերը չեն կարող COVID փոխանցել ձեզ կամ ձեր երեխային:



Եթե ունեք հարցեր, խոսեք ձեր բժշկի հետ: Դուք կարող եք նաև զանգահարել 1-866-626-6847 համարով, հաղորդագրություն ուղարկել 855.999.8525 համարին, Էլ. նամակ ուղարկել ContactUs@mothertobaby.org հասցեին կամ գրույց սկսել mothertobaby.org/ask-an-expert հղմամբ:

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐՆ ԱՆՎՃԱՐ ԵՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ, անգամ եթե դուք չունեք ապահովագրություն

Ձեզ հարցեր չեն տա ձեր ներգաղթային կարգավիճակի վերաբերյալ: Կան բազմաթիվ տեղեր, որոնք բաց են շաբաթ, կիրակի օրերին և երեկոյան ժամերին և չեն պահանջում նախօրոք ժամադրություն: Վայրերը գտնվում համար՝

- Այցելե՛ք ph.lacounty.gov/howtogetvaccinated կայքը կամ զանգահարեք **1-833-540-0473** համարով առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը:
- Չանգահարեք 2-1-1 համարով կամ հարցրեք ձեր բժշկին կամ տեղական դեղատանը:
- Անվճար տրանսպորտը և տնային պատվաստումները նույնպես հասանելի են:

